ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**13 ապրիլի 2024թ.**

**Նախագահ Մ.Ա.Զաքարյան**

**Քարտուղար Ք.Վ.Օթարյան**

**Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:**

ՕՐԱԿԱՐԳ

| | |
|---|---|
| 1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: | *Դեկան* |
| 2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում: | *ԿԾ պատասխանատու* |
| 3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման հաձնաժողովի կազմի առաջադրում և հաստատում» | *Դեկան Ամբիոնների վարիչներ* |
| 4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհդին կից և շահակից կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ներկայացուցիչների կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը / ԿԾ պատասխանատու, ֆակուլտետի գիտ.քարտուղար/ | *Դեկան, Ամբիոնների վարիչներ, գիտ.քարտուղար* |
| 5. Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ | Զեկ. ղեկավարներ, անդամներ |
| **6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում:** | *Դեկան, Ամբիոնների վարիչներ* |

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

**Որոշում՝9/1**

- **Հաստատել նիստի օրակարգը:**

**Օրակարգի առաջին հարցի՝** «2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարարյանը ամփոփ ներկայացրեց 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները:

**Արտահայտվեցին-**Գ.Սարգսյանը ,Ա.Հովակիմյանը:

**Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 9/2**

**Ընդունել ի գիտություն:**

Օրակարգի երկրորդ՝ «Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ա.Հովակիմյանը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

**ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 9/3**

**Օրակարգի երրորդ հարցի՝** «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման հաձնաժողովի կազմի ձևավորում» **հարցի**

վերաբերյալ զեկուցումով հանդես եկան դեկանի ժ/պ Մ.Զաքարարյանը, ԸՄԲ ամբիոնի ժ/պ Գ.Սիմոնյանը:

Զեկուցողները ներկայացրեցին, «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ N 72/7 ՈՐՈՇՄԱՆ համաձայն մրցութային հանձնաժողովների կազմը և գործունեության կարգը:

«Բնական գիտություններ» (մասնակից ստորաբաժանում՝ Բնական գիտությունների ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգում մրցանակակիր ընտրելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել հանձնաժողով, որի կազմը (յոթ հոգի) հաստատվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով՝ ֆակուլտետի գիտական խորհրդի ներկայացմամբ:

Առաջարկվեց 7 անդամով հետևյալ կազմը.

1. Զաքարյան Մ.Ա.,
2. Հովակիմյան Ա.Ս.,
3. Սիմոնյան Գ.Ս., որպես նախագահ
4. Հովսեփյան Կ.Հ.,
5. Սարգսյան Գ.Վ.,
6. Մարգարյան Ա.Շ.
7. Օթարյան Ք.Վ ., որպես քարտուղար

«Բնական գիտություններ» (մասնակից ստորաբաժանում՝ Բնական գիտությունների ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգ մրցույթին մասնակցելու համար ԸՄԲ ամբիոնի դասախոս Սերգեյ Ազարյանը Հանձնաժողովին է ներկայացրել հետևյալ փաստաթղթերը. 1) դիմում-հայտ, 2) ինքնակենսագրություն (CV), 3) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող դասընթացների ցանկ՝ հաստատված ամբիոնի վարիչի կողմից, 4) լսարանային գործունեության օրինակներ՝ ակտիվ ուսուցման և նորարարական մեթոդների օգտագործմամբ, ինչպես նաև առնվազն մեկ տեսաձայնագրված դասախոսության օրինակ, 5) ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները՝ որպես հետադարձ կապի արդյունքներ, 6) դասընթացի ընթացքում ուսանողների կողմից

ներկայացված աշխատանքների օրինակներ (առկայության դեպքում), 7) դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից աջակցության նամակ, 8) վերջին 5 տարվա ընթացքում դասավանդվող առարկաների թեմաների վերաբերյալ գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ (առկայության դեպքում), 9) վերջին 2 տարվա ընթացքում թեկնածուի դասերին մասնակցած ուսանողների աջակցության նամակ(ներ) (առկայության դեպքում), 10) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող առնվազն երկու դասընթացների նյութեր՝ տեղադրված «E-learning» հարթակում:

**Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց**

**ՈՐՈՇՈՒՄ 9/4**

ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանը ներկայացնել Բնական գիտությունների ֆակուլտետի անդամով հետևյալ կազմը.

1. Սիմոնյան Գ.Ս., որպես նախագահ
2. Օթարյան Ք.Վ ., որպես քարտուղար
3. Զաքարյան Մ.Ա.,
4. Հովակիմյան Ա.Ս.,
5. Հովսեփյան Կ.Հ.,
6. Սարգսյան Գ.Վ.,
7. Մարգարյան Ա.Շ.

Կազմակերպել և անցկացնել դասալսում և լրացնել դասի գնահատման հարցաթերթը

**Օրակարգի չորրորդ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից և շահակից կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին**

**մասնակցելու համար ներկայացուցիչների կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Մ.Զաքարյանը, Ա.Հովակիմյանը:**

Նրանք ներկայացրեցին, որ շահակից կառույցների հետ Մասնաճյուղի համագործակցության նպատակն է. ֆակուլտետների ներուժով ընդլայնել ՀՀ պետական, մասնավոր ընկերությունների և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը, ապահովել բազմակողմանի համագործակցություն, ներգրավվել ՀՀ և մարզի խնդիրների լուծման ծրագրերում, նպաստել մարզի զարգացմանն ու առաջընթացին և այդ համագործակցության շրջանակներում նպաստել ուսանողների մասնագիտական կարողությունների բարելավմանը, աջակցել նրանց նախաձեռնություններին, բիզնես գաղափարներին, ծրագրերին և կարիերային:

Ներկայացվեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման կանոնակարգը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը, Ս.Մնացականյանը:

**ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 9/5**

Տնօրենի հաստատմանը ներկայացնել

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհդին կից և շահակից կառույցների հետ համագործակ-ցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ներկայացուցիչների հետևյալ կազմը.

Սաթենիկ Վլադիմիրի Մնացականյան – Ծ/ԻՏ ամբիոնի դասախոս, «ԳՀԶԿ» Հիմնադրամ՝ Ijevan CyberHub ղեկավար

Քնար Վլադիմիրի Օթարյան –Ծ/ԻՏ ամբիոնի Դասախոս, Ֆակուլտետի գիտ քարտուղար, պրակտիկայի ղեկավար

**Օրակարգի հինգերորդ՝ «Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Գ.Գուլակյանը:**

**Ծառայությունների վճարովի մատուցման** պայմանագիր.ԵՊՀԻՄ-ՆՄ-22-06 N 61/21 **«Տավուշի մարզում ինտենսիվ այգու հաշվառման թվայնացված դրոնային համակարգի մշակում»** թեմայով դրամաշնորհային ծրագրի կատարած աշխատանք ների ընթացքի վերաբերյալ ներկայացրեց հաշվետվություն /ներկայացվում է հավելվածով/

## I. ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ*

| Հաշվետու ժամանակ | Նախատեսվող աշխատանքներ |
|---|---|
| **Առաջին եռամսյակ**<br>**(հունվար, փետրվար, մարտ, ապրիլ)** | • Նախապատրաստական աշխատանքներ՝ հետազոտության տեխնոլոգիական փուլի ու տակտիկայի մշակում:<br>• Ուսումնասիրել բլիթուդ անտենայով ինֆորմացիայի փոխանցման հնարավորությունները և ներկայացվող պահանջները,<br>• Այս փուլի հետազոտության արդյունքները ամփոփել:<br>• Ուսումնասիրել դրոնի թռիչքային հնարավորությունները |

Բերված օրացույցային պլանում ներկայացված հետազոտությունները իրականացվել են ըստ խնդիրների:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը,

**ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

ՈՐՈՇՈՒՄ 9/6

Ռ.Մ.Յոլչյանի ղեկավարությամբ իրականացված **«Տավուշի մարզում ինտենսիվ այգու հաշվառման թվայնացված դրոնային համակարգի մշակում»** վերնագրով հետազոտական աշխատանքի ընթացիկ հաշվետվությունը կատարված է պատշաճ կերպ և համապատասխանում է նման աշխատանքների ներկայացման որակական չափանիշներին: Ֆակուլտետի Գիտական խորհուրդը առաջարկում և նպատակահարմար է գտնում թեմայի ֆինանսավորումը:

**Օրակարգի վեցերորդ՝ «Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում»**, հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ.Զաքարյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

**ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 9/7**

Ընդունել ի գիտություն